

ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ եւ եկեղեցին

(Շար. տե'ս «Բազմալեզու» 1968, ք. 1-3, էջ 56)

Եկեղեցին՝ ՆԵՐԿԱՅ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՁ

2. Մշակույթ եւ քաղաքակրթութիւն

Ամուսնական եւ ընտանեկան կեանքի մասին ներկայացուած հարցերէն ետք, ժողովը կը խօսի մշակութային յառաջագիծութեան մասին: Կը շրջագծէ նախ «մշակոյթ» բառին իմաստը. «Այս ընդհանուր եզրը, որ է մշակույթ, կը նշանակէ այն ամէն ինչ, որոնցմով մարդս կը զարգացնէ եւ կ'արտայայտէ իր հոգեկան ու մարմնական բազմապիսի ձեւերը, կը ջանայ՝ դիտութեան եւ աշխատանքի միջոցով՝ իր իշխանութեան ենթարկել տիեզերքը, աւելի մարդկային դրոշմ մը տալ ընկերութեան կեանքին՝ բարձրութեւ հաստատութիւններու զարգացումով, եւ հուսկ այն ամէն ինչ՝ որով մարդս դործնականօրէն կ'արտայայտէ, կը պահպանէ ու կը փոխանցէ ժամանակի ընթացքին շահած հոգեկան մեծ փորձառութիւններն ու ձգտումները, որպէսզի անոնք կարենան ծառայել շատերու, մանաւանդ թէ հանուր մարդկութեան զարգացումին» (Բ. մաս, Գլ. Բ. հմ. 53): Ուստի, Տիեզ. ժողովը կը կիրարկէ «մշակույթ» եզրը՝ ասոր ամէնէն աւելի ընդարձակ առումով, որ կը ներփակէ մարդկային մտքին, աշխատանքին ու քաղաքակրթութեան բոլոր արտայայտութիւնները: Յետոյ նկատի կ'առնուի նաեւ «մշակոյթ» գաղափարին ընկերային ու

պատմական տեսակէտը, որ յաճախ ազդարարական հանգամանք մը կը ստանայ, երբ կը խօսինք՝ օրինակ՝ մշակոյթներու բազմութեան ու զանազանութեան մասին:

Ներածական այս անդրադարձութիւններէն ետք, ժողովը համադրական նկարագրութիւնը կ'ընէ ներկայ աշխարհի մշակութային կացութեան, եւ չորս հարցականներ կը դնէ: Ա) Ի՞նչպէս հաշտեցնել մշակութային նոր զարգացումը՝ աւանդական ժառանգութեան մշակութային արժէքներուն հետ, նկատի առնելով մասնաւորապէս՝ մեր օրին տիրապետող դիտարուեստական եւ անցեալի դասական մշակոյթները: Բ) Ի՞նչպէս համաձայնեցնել մասնագիտական ճիւղերու բազմացումին եւ ընդարձակումին հետ՝ ընդհանուր զարգացումի եւ համադրութեան պահանջը: Գ) Ի՞նչ ձեւով ապահովել ամէնուն մասնակցութիւնը՝ մշակութային զարգացումին: Դ) Ի՞նչպէս կարելի է ընդունիլ մարդկային մշակոյթի օրինաւոր անկախութիւնը՝ առանց իյնալու դուռ երկրաւոր հանդամանք ունեցող եւ կրօնքի ընդդիմացող «հիւսնիւղմ»ի մը մէջ:

Առաջին հարցին լուծումը կառավարող սկզբունքները՝ ժողովը արդէն մշակած էր Սահմանադրութեան առաջին մասին երրորդ գլուխին մէջ, խօսելով մարդուն

դործունէութեան շուրջ: Հոն կը շեշտուէր այդ դործունէութեան «մարդկային» նկարագիրը եւ յարաբերութիւնը մարդուն անձնականութեան հետ, որմէ կը ստանայ մշակոյթը հուսկ իր ներքին արժէքը: Ասկէ կը հետեւի՝ թէ մշակոյթը «պէտք է ուղղուի մարդկային անձին ամբողջական կատարելութեան, հասարակութեան եւ ամբողջ մարդկային ընկերութեան բարիքին» (անդ., հմ. 59): Ժողովը այս հաւաստումը կը կատարէ իրրեւ առաջին սկզբունք այն հարցին շուրջ՝ թէ ի՞նչպէս կարելի է հաշտեցնել մշակոյթի զանազան տեսակէտները: Մարդն է միշտ ամէն ներդաշնակութեան աղբիւրը եւ կորիզը. մարդկային արժէքներու մշակումին մէջ միայն կրնան զուգադիպել եւ իրար լրացնել աւանդութեան եւ արդի յառաջագիծութեան լաւագոյն նպաստները:

Երկրորդ հարցին շուրջ, թէ ի՞նչ ձեւով կարելի է արդի մարդուն ամբողջական դաստիարակութիւն մը տալ, ժողովը կը թելադրէ քանի մը դործնական ուղղութիւններ (անդ., հմ. 61): Նախ՝ դիտել կու տայ թէ միշտ աւելի կ'անհետանայ «ընդհանրական մարդուն» պատկերը: Ասոր փոխարէն՝ արդի քաղաքակրթութիւնը կ'ընձեռէ միջոցներ, որոնք կրնան նըպաստել, երբ լաւ օգտագործուին, ընդհանուր զարգացումի կազմութեան. ասոնց կարգին՝ կը յիշատակուին դիրքերու եւ մամուլի ծաւալումը, ինչպէս նաեւ ընկերային ու մշակութային հաղորդակցութեան տեսա-լսողական միջոցները: Նմանապէս, ազատ ժամերու ընդարձակումը՝ բարեբաւտ առիթ մը կ'ընծայէ այս ուղղութեամբ օգտագործուելու: Ազատ ժամանակը օգտագործելու զանազան ձեւերու մէջ, ժողովը կարեւոր տեղ կ'ընծայէ զբօսաշրջային պոտյոներու, «որոնցմով կը նրբանայ մարդկային հողին ու մարդիկ կը ճոխանան փոխադարձ ծանօթութեամբ»: Մարդկան ելոյթներն ալ կրնան այս նպատակին ծառայել եւ «ստատրել եզրայրական յարաբերութիւններ հաստատելու՝ ամէն դասակարգէ ու

զանազան երկիրներէ կամ ցեղերէ մարդոց միջեւ»: Այս դործնական ցուցմունքներէն ետք, ժողովը կը փութայ յարել. «Ամէն պարագայի, բոլոր այս դիւրացումները պիտի չկարենան ապահովել մարդուն մշակութային կազմաւորումը, որ ըլլայ լրիւ եւ ամբողջական, եթէ միաժամանակ մարդ անփոյթ դոնուի այս խորունկ հարցին շուրջ՝ թէ ի՞նչ նշանակութիւն ունին մարդկային անձին համար մշակոյթն ու դիտութիւնը»:

Երրորդ հարցին նկատմամբ՝ ժողովը կ'անդրադառնայ խօսելով մշակոյթի ծաւալումի մասին, որուն անհրաժեշտութիւնը կը հիմնուի երկու հական շարժառիթներէ. իւրաքանչիւր անձի արժանապատւութիւնը իրրեւ մարդ, եւ հասարակաց բարիքին իսկապէս «մարդկային» ձեւով մը գործակցելու հարկը՝ դիտակից եւ պատասխանատու հոգիով: Այս ուղղութեամբ ձեռք առնուելիք առաջին միջոցը՝ ամբողջական ջնջումն է անդրադիտութեան, որ կը հակասէ հիմնովին յիշեալ շարժառիթներուն: Այս տարրական անհրաժեշտութեանց զատ, ժողովը կը մտախօսէ ապահովել ամէնուն՝ կեանքի եւ աշխատանքի այնպիսի պայմաններ, որ չխափանեն իւրաքանչիւրին մէջ մշակութային ճիւղ մը: Այս թելադրանքը կը կատարէ յատկապէս գործաւորներու եւ հոգադործներու նկատմամբ: Ժողովը կ'անդրադառնայ հուսկ հակիրճ ձեւով կրնորու մասնակցութեան շուրջ՝ հանրային եւ մշակութային կեանքին: «Կրնորը կ'աշխատին արդէն կեանքի զրեթէ բոլոր հատուածներուն մէջ: Պատշաճ է որ անոնք կարենան ստանձնել լիովին իրենց վիճակիւր բաժինը՝ իրենց ընտելեան համապատասխան ձեւով: Բոլորին պարտականութիւն պէտք է ըլլայ աշխատիլ որ ամէն կողմ ընդունուի եւ դիւրանայ կրնորու անհրաժեշտ ու սեփական մասնակցութիւնը՝ մշակութային կեանքին»:

Մշակոյթի նկատմամբ ժողովի դրած չորրորդ հարցը՝ անոր օրինաւոր անկախութեան եւ կրօնքի հետ յարաբերութեան հարցն է: Տիեզ. ժողովը, խօսելով

մարդկային գործունեության շուրջ (Ա. մաս, Գ. գլուխ), յայտարարած էր երկրաւոր բոլոր գործունեութիւններու օրինաւոր անկախութիւնը՝ իրենց սեփական բոլոր մարդերուն մէջ. իսկ անասունաձուլեան մասին խօսելով, յայտարարած էր նաեւ թէ քրիստոնէական հաւատքը չի խափաներ որ մարդս նուիրուի երկրաւոր քաղաքին շինութեան, ո՛չ ալ կը նուազեցնէ երկրաւոր հոգերու կարեւորութիւնը, այլ թէ ընդհակառակն՝ նոր շարժառիթներ եւս կ'ընծեոյն ասոնց: Այս կէտին մէջ, Ժողովը ուրիշ բան չ'ըներ, եթէ ոչ մասնականօրէն յարմարցնել այս սկզբունքները՝ մշակոյթի զանազան բնադաւաճներուն, նկարագրելով ասոնց բերած նպաստը՝ մարդկային կատարելագործումին: Ինչ որ կարեւոր է մատնանշել, այն է թէ Ժողովը զանոնք կը նկատէ իրեն հնարաւոր պատրաստութիւն մը՝ քրիստոնէական պատգամին ընդունելութեան. որովհետեւ կը բարձրացնեն հոգին դէպի ինչ որ զեղեցիկ է, ճշմարիտ ու բարի, եւ կը հրահանեն մարդս՝ նըւիրուելու իր նմաններուն ծառայութեան: Այս իսկ պատճառով, հաստատելով հանդերձ մշակոյթի օրինաւոր անկախութիւնը, պէտք չէ վախճալ թէ մշակոյթի ճամբով մարդս չկարենայ հանդիպել քրիստոնէական հաւատքին: Անշուշտ, գիտութեան եւ գիտարուեստի յառաջադիմութիւնը կրնայ նեցուկ կանգնիլ տեսակ մը երեւութապաշտ եւ անտարբեր վերաբերումի՝ անոնց մշակած մեթոտին բերումով, որ չի կրնար իրեն ներքին պատճառներուն մէջ թափանցել, երբ այդ մեթոտը սխալ կերպով գերագոյն կանոն կը դառնայ ամբողջական

ճշմարտութեան մը փնտռութիւն: Բայց ասիկա կարելի չէ որպէս անհրաժեշտ արդիւնք նկատել ներկայ մշակոյթի էութեան:

Անցնելով զանազան մշակոյթներու եւ քրիստոնէութեան միջեւ եղած յարաբերութեան հարցին, Ժողովը կը հաստատէ քրիստոնէութեան զերանցիկ զիրքը բոլորին նկատմամբ, քանի որ ո՛չ մէկուն հետ կը նոյնանայ, եւ միւս կողմէ՝ կարող է ամէնքէն իւրացուիլ, եւ իւրացնել իրեն՝ անոնց ճշմարիտ ու լաւ տարրերը: Դիւրին է նշմարել թէ ինչպէս ասիկա բացայայտ բանաձեւումն է այն սկզբունքին՝ որ ներշնչեց Վատիկանեան Ժողովի ամբողջ նպատակն ու գործունեութիւնը. այսինքն՝ իրադրութիւն մերձեցումը քրիստոնէութեան եւ արդի քաղաքակրթութեան. մերձեցում մը՝ որ կ'արտացոլայ Ժողովի բովանդակ գործունեութեան մէջ ու կը շարունակուի Եկեղեցւոյ կեանքին մէջ՝ յետ-Ժողովեան շրջանին:

Մշակութային անկախութեան մասին խօսելով, Ժողովը կը նուիրականացնէ նաեւ անհատներու եւ հասարակութիւններու իրաւունքը՝ զազափարի ու կարծիքի ազատութեան. յատկապէս կը յայտարարէ՝ թէ «Հանրային իշխանութիւններուն պաշտօնը չէ՛ սահմանել մշակութային ձեւերու բնոյթը, այլ ապահովել՝ ամէնուն համար՝ մշակութային կեանքին զարկ տալու ատակ պայմաններ ու նըպաստներ, նաեւ երկրի մը փոքրամասնութիւններուն միջեւ» (հմ. 59): Մեր ազգային ներկայ գոյութիւնը մօտէն չահալող հաստատած մըն է ասիկա, միջազգային կարեւորութեամբ եւ հեղինակութեամբ օժտուած՝:

կայացուցած է տաղարկներ, որոնք աղագծեն Տիեզ. Ժողովի ինչ ինչ բանաձեւումներուն վրայ: Անոնցմէ ամէնէն յատկանշականներն են. Ա) Ծիսական Սահմանադրութեան Թ. 3 համարին նկատմամբ կատարած դիտողութիւնը: Կ'առաջարկէր զայն բանաձեւել այնպիսի ձեւով՝ որ Արեւելեան Եկեղեցիներն ալ կարեն նային լիովին օգտուիլ Ծիսական վերանորոգումի շարժումէն, առանց հեռանալու բնաւ ի-

3. - Տնտեսական-ընկերային կեանք

ա) Շատ ընդարձակ նիւթ մըն է ասիկա, ամբողջ Գ. գլուխը: Ժողովը նպատակ չունի քննել զայն՝ իր բոլոր տեսակէտներուն մէջ, քանի որ վերջին ութսուն տարիներու ընթացքին՝ Եկեղեցին ստէպ առիթմով ունեցած է պարզելու իր վարդապետութիւնը ընկերային հարցին շուրջ եւ հետեւելու ասոր յեղաշրջումին: Ժողովը կ'ենթադրէ եւ չ'ուզէր կրկնել Եկեղեցւոյ ընկերա-բարոյական ուսուցումը, որուն վերջին եւ ամէնէն համադրական արտայայտութիւնն եղած էր Յովհաննէս ԻԳ. Քահանայապետին «Mater et Magistra» (Մայր եւ Դաստիարակ) Շըր-Ջաբրահանը, հրատարակուած 1961ին, Լեւոն ԺԳ. Քահանայապետի «Rerum novarum» կոնդակին հրատարակման 70ա-

րենց սեփական եւ ընդիմադրութիւններէն. մանաւանդ թէ, հարկ եղած պարագային՝ վերադառնալով անոնց: Բ) Եկեղեցւորականութեան մէջ՝ հաղորդակցութեամբ զազափարին կարեւորութեան եւ էական դերին շուրջ կատարած անդրադարձութիւնները, Ժողովի Բ. նստաշրջանին, որոնք լայն արձագանգ գտած են Ժողովական բանաձեւումներուն մէջ: Գրպծ. Anastasio Եպս. Granados, «El "Misterio de la Iglesia" en el Concilio Vaticano II» խորագրով իր գրքին մէջ, խօսելով «հաղորդակցութեան» զազափարին շուրջ, կը յիշէ մասնաւոր կերպով Գերպ. Ամատունիի Էյոյթը (տե՛ս էջ 330, Ed. Rialp, S. A. Madrid, 1965): Բացի ասոնցմէ, Գերպ. Ամատունի եղած է նաեւ ջերմ պաշտպան մը ոչ-կաթողիկէ արեւելիցիներու հետ խառն ամուսնութիւններու վաւերականութեան, եւ մանաւանդ՝ արեւելիցի բոլոր հաւատացեալներուն՝ իրենց ընդհանր պահանջներու պարտականութեան, նաեւ երբ կաթողիկէ միութեան կը յարին:

2. Լեւոն ԺԳ. ի յիշեալ կոնդակը պաշտօնական սկզբնաւորութիւնը կազմած էր Եկեղեցւոյ ընկերա-բարոյական ուսուցումին. բայց, դժբախտաբար, քիչ մը ուշացած էր: Եկեղեցին պաշտպան կը կանգնէր գործաւորներու արդար պահանջներուն՝ յանուն մարդկային իրաւունքի եւ արժանապատուութեան. խրատ մը կամ յորդոր մը չէր՝ որ կ'ուղղէր գործատէրերուն, որ փայփայէր անոնց բռնատիրական զզացումները: Բայց շուրջ 40 տարիներէ ի վեր հրապարակ ելած էին արդէն Մարքսի տեսութիւն-

մեակին առիթով²: Կը փափաքէ միայն վերակոչել քանի մը հիմնական սկզբունքներ եւ լրացնել՝ ինչ ինչ կէտերու մէջ՝ նախապէս բանաձեւուած վարդապետութիւնը: Տալիք լրացուցիչ ուղղութիւններուն համար, Ժողովը իրեն հեռանկար կ'ընտրէ աշխարհի տնտեսական բարդաւաճումն ու անոր պահանջները: Այս դրական ու գործօն հեռանկարը կը պատշաճի յատկապէս՝ տեսական յեղաշրջումի ենթակայ աշխարհի մը կացութեան, ինչպէս է մերինը:

բ) Ժողովը կը բանաձեւէ նախ հարազատ զազափարը տնտեսական բարդաւաճումին: Ան չի կրնար կայանալ կամ իրեն նպատակ ունենալ՝ միմիայն արտագրութեան աճումը կամ շահերու առաւելութիւնը: Այլ պէտք է ծառայէ մար-

ները, ընկերավարութիւնը հետզհետէ ընդունելութիւն կը գտնէր, եւ գործաւորական ճնշւած դասակարգը սկսած էր ուժանալ Եկեղեցիէն: Այսպիսի աննպաստ յապաղումով հանդերձ, Լեւոն ԺԳ. ի ձեռնարկը գործի չեղաւ օգտաւատ արդիւնքներէ: Անոր յաջորդող եօթնասուն տարիներու ընթացքին՝ Եկեղեցին կրցաւ թափանցել, գոնէ մասամբ, գործաւորական աշխարհին մէջ, զոր ամբողջապէս կորսնցնելու վտանգին մէջ կը գտնուէր: 1967ի Մարտ 26ին, Պօղոս Զ. Սրբ. Քահանայապետը հրատարակեց նոր ՇըրՋաբրահան մը «Populorum progressio» (Ժողովուրդներու յառաջադիմութիւնը) խորագրով: Հոս, տնտեսա-ընկերային կեանքը ամբողջ նոր տեսանկիւնէ մը կը դիտուի, ապահովելու համար բոլոր Ժողովուրդներուն՝ համընթաց եւ հաւասարակրօն յառաջադիմութեան մը կարելիութիւնը: Կը քննուին զլիարատապէս զարգացած ու թերած երկիրներու միջեւ յարաբերութիւններն ու գործակցութիւնը: Ընկերային հարցը, որ «Rerum novarum»-ի մէջ սեփական էր գործաւոր դասակարգին, եւ կը ծագէր Եւրոպայի ճարտարարուեստացումէն, «Populorum progressio» կոնդակով կը դառնայ համամարդկային ու համաշխարհային հարց, որ սերտօրէն շարկապաշտ է Ժողովուրդներու քաղաքական եւ մշակութային կեանքին, ինչպէս նաեւ խաղաղութեան ապահովութեան հետ: ՇըրՋաբրահանը հեղինակաւոր ընդլայնում մըն է Ժողովի տեսակէտներուն:

1. Տիեզ. Ժողովի պաշտօնական զեկոյցներուն համաձայն՝ «Գիտականութիւններու» յիշատակութիւնը, այս համարին մէջ, առաջարկուած է 20 անձերէ: Անոնցմէ մէկն էր Գերպ. Կարապետ Եպս. Ամատունի, Առաքելական Առաջնորդ Պրահայի Հայ Կաթ. հաւատացեալներուն: Կ'ուղղէինք նշել այս առիթով՝ թէ Գերպ. Ամատունի, Տիեզերական Ժողովի ընթացքին, ունեցած է ուշադրաւ զանազան էլոյթներ եւ ներ-

դուռն՝ իր ամբողջութեան մէջ, նկատի առնելով անոր ո՛չ միայն նիւթական, այլ եւ իմացական, բարոյական, հոգեկան ու կրօնական կարիքները: Ուստի, տնտեսական գործունէութիւնը պէտք է կատարուի, բնականաբար, տնտեսական օրէնքներու համաձայն, բայց մնալով միշտ բարոյականի գծած սահմաններուն մէջ:

Գ) Ժողովը հարկ կը դրայ բացայայտօրէն բանաձեւելու այս հիմնական սկզբունքը, միուած մտահոգիչ շարժառիթներէ, որոնց մասին կ'անդրադառնայ՝ նկարագրելով ժամանակակից տնտեսական կեանքին յատկանշական գիծերը: Մտահոգութեան սուր հանգամանքը աւելի մօտէն կը դրացուի նոյնինքն բանաձեւումի ոճէն. «Քիչ չեն այն մարդիկը, մանաւանդ տնտեսապէս բարգաւաճ երկիրներու մէջ, որ կարծես կ'առաջնորդուին միմիայն տնտեսական պահանջներէ. այնպէս որ, իրենց անձնական եւ ընկերային ամբողջ կեանքին մէջ՝ տնտեսապաշտ մտայնութիւն մը կը տիրէ...: Դարու մը մէջ՝ ուր տնտեսական կեանքի զարգացումը, եթէ ուղղուէր եւ կարգաւորուէր մարդկային ու տրամաբանական ձեւով, կրնար հնարաւոր դարձնել ընկերային անհաւասարակշռութիւններու մեղմացումը, յաճախ պատճառ կը հանդիսանայ անոնց ծանրացումին...: Մինչ անհամար ամբոյններ ամէնէն աւելի անհրաժեշտին կը կարօտին, ուրիշներ, նոյնիսկ թերաճ երկիրներու մէջ, զեղխութեամբ կ'ապրին կամ կը վատեն: Շուայութիւնը թշուառութեան կ'ընկերէ: Ու մինչ սակաւաթիւ մարդիկ վճռելու ընդարձակ իշխանութիւններ ունին, շատեր զրեթէ ոչ մէկ կարելիութիւն՝ անձնական նախաձեռնութեամբ կամ պատասխանատուութեամբ գործելու, մնալով յաճախ՝ կեանքի եւ աշխատանքի այնպիսի պայմաններու մէջ, որոնք վայել չեն մարդկային անձին» (Հմ. 63):

Դ) Այս ու նման մտահոգութիւններէ մղուած՝ Ժողովը քանի մը գործնական

յարմարեցումներ կը հանէ դրած սկզբունքէն: Նախ, տնտեսական բարգաւաճումը պէտք է մարդէն կառավարուի, այսինքն՝ տեղի ունենայ կարելիին չափ բազմաթիւ անհատներու մասնակցութեամբ. կարելի է զայն թողուլ քանի մը մարդոց կամ խումբերու քմահաճոյքին: Ասիկա պետութիւններու վրայ ծանրացող պատասխանատուութիւն մըն է. բայց պետութիւնն ալ իրաւունք չունի իր կամքին ենթարկելու տնտեսական ամբողջ գործունէութիւնը: Այս ձեւով, անիկա քաղաքացիները միեւնոյն դուրին մէջ պիտի ձգէ, որմէ կը ջանայ ճողոպրել զանոնք: Պետութեան գլխաւոր դերն է ուղղել եւ կարգաւորել քաղաքացիներու տնտեսական գործունէութիւնը՝ հարկ եղած ազդու միջոցներով:

Պօսելով տնտեսական եւ ընկերային ակնառու անհաւասարութիւնները անհետացնելու միջոցառումներուն շուրջ, զըլխաւորապէս ուշադրութեան կը յանձնուի արդիացումի անհրաժեշտութիւնը՝ երկրագործական հատուածներու մէջ: Ծարտարարութեան օրէնք կազմակերպուած ընկերութեան մը մէջ, հողագործները իրենց տնտեսական պայմաններուն եւ աշխատանքի հնամենի մեթոտներուն պատճառով, յաճախ ստորադասութեան վիճակի մը մէջ կը մնան:

Ե) Ժողովը կը պանծացնէ նաեւ աշխատանքի նուիրականութիւնը, որ կը ծագի մարդկային գործունէութիւնն արժեքաւորող միեւնոյն շարժառիթներէն: Աշխատանքը, որով մարդ իր ապրուստը կը ծարէ, ամէնէն ընդարձակ հատուածը կը գրաւէ դուցէ՛ տիեզերքի մէջ մարդուն գործունէութեան: Նոյնինքն Աստուծոյ Որդին՝ գործաւորի մը հանգամանքով ներկայացաւ մարդկութեան: Իբրեւ մարդուն յատուկ գործունէութիւն՝ աշխատանքը կը գերազանցէ տնտեսական կեանքի բոլոր միւս տարրերը, քանի որ անոնք լոկ միջոցային հանգամանք ունին: Ասկէ կը ծագի անհրաժեշտութիւնը «արգիւնարեւական ա մ բ ո ղ ղ զարգացումը

յարմարեցնելու մարդկային անձին պահանջներուն եւ կեանքի պայմաններուն, զլխաւորապէս՝ ընտանեկան կեանքին: Ասիկա կը դօրէ յատկապէս ընտանիքի մայրերուն համար, նկատի առնելով միշտ իւրաքանչիւրին սեռը եւ տարիքը» (Հմ. 67): Իսկ տնտեսական գործառնութիւններու կեանքին մէջ, Ժողովը կը մտադրէ որ միշտ աւելի քաջալերուի եւ ասպարէզ դառնէ ամէնուն գործօն մասնակցութիւնը, առանց անտեսելու՝ անշուշտ՝ գերերու տարբերութիւնը (սեփականատէրի, գործառուի, հսկիչի, գործաւորի) եւ գործառնութեան ղեկավարութեան համար անհրաժեշտ եղող միութիւնը (Հմ. 68): Բնական է թէ այս մասնակցութեան ձեւերուն գործնական սահմանումը եւ անոնց տրուելիք նախընտրութիւնը կը պատկանի տնտեսապետական ասպարէզին:

Գ) Եկեղեցւոյ ընկերա-բարոյական ուսուցումին նախորդ հանգրուաններուն նկատմամբ, Ժողովական Սահմանադրութեան ամէնէն ինքնատիպ տարրը՝ կը վերաբերի «անհատական» եւ «հասարակաց» սահմանումին կամ յատկացումին միջեւ տիրող յարաբերութեան: Այս մասին Ժողովը նոր հեռանկար մը, հարցին մօտենալու նոր տեսանկիւն մը կը բանայ: Ինչքերու վրայ մարդուն ունեցած իրաւունքներուն քննութեան մէջ, ժամանակին՝ մեկնակէտ կ'առնուէր անհատական ստացուածքի իրաւունքը, որ իբրեւ հիմ կը ծառայէր անդրադոյն ընդլայնումներու: Այս նկատողութեան մէջ կը զգացուէր որոշ հակադրութեան մը ներկայութիւնը՝ համայնավարական դրութեան դէմ: Բնական է, ասոր վրայ կ'աւելնար յետոյ բարոյագիտութեան աւանդական ուսուցումը՝ թէ ինչքերը, բացի այս «անհատական» սահմանումէն, «հասարակաց» յատկացում մըն ալ ունին, որովհետեւ հաստատուած են ամէն մարդուն համար եւ ամէն մարդ իրաւունք ունի երկրին բարիքները վայելելու: Այս սկզբունքը, սակայն, կը մնար առհասարակ

րակ առանց համապատասխան ընդլայնումի. անկէ հետեւանք կու գար միայն՝ կարեւոր, բայց գործադրութեան առիթը չատ հաղուադէպօրէն ներկայացող եղբակցութիւն մը. այն է, թէ վերջին ծայր՝ անհրաժեշտութեան պարագային՝ մարդ իրաւունք ունի օգտուելու ուրիշին հարստութենէն, նոյնիսկ հակառակ առիթը կամքին, բայց միայն իր անհրաժեշտութեան չափով:

«Մայր եւ Դաստիարակ» Շրջաբերականը նոր քայլ մը կը նշէր դէպի առաջ՝ բացայայտօրէն բանաձեւելով այս եզրակացութեան մէջ լռեւեայն սկզբունք մը. այսինքն թէ «Իւրաքանչիւր մարդու իրաւունքը՝ արտաքին բարիքներէն իր ապրուստը հոգալու, կը կանխէ տնտեսական բովանդակութիւն ունեցող ուրիշ որեւէ իրաւունք. որով կը կանխէ նաեւ անհատական ստացուածքի իրաւունքը»³: Յովհ. ԻԳ. ուրիշ քայլ մը եւս կատարած էր, այս անգամ աւելի գործնական բովանդակութեամբ, նոր բանաձեւում մը տալով «աւելորդ» զաղափարին: Տիեզերական Ժողովի բացումէն ամիս մը առաջ, ձայնասփիւռով պատգամ մը կ'ուղղէր աշխարհի, ուր կը ներկայացնէր գումարուելիք Ժողովին գործունէութեան ասպարէզը եւ մայր ուղղութիւնները: Հոն կը հաստատէր ի միջի այլոց. «Ամէն մարդու պարտականութիւնն է, բայց մանաւանդ խթանիչ պարտականութիւն մըն է քրիստոնեային համար, իր աւելորդը նկատել ուրիշին կարիքներուն չափով, և ուշադրութեամբ հսկել որ ստեղծեալ բարիքներու մատակարարութիւնն ու բաշխումը բոլորին ի նպաստ դրուին»⁵: Նոր էր տնտեսա-իրաւական բանաձեւումը, բայց աւետարանական սիրոյ եւ ողորմածութեան ամէնէն հարադատ էութիւնը

3. «Վերջին ծայր անհրաժեշտութիւն» կը նկատուի, երբ անձի մը թշուառութիւնը զինք մահուան վտանգին մէջ կը դնէ, եւ կարելիութիւն չունի ուրիշ միջոցներով ազատելու իր վիճակէն:

4. AAA. LIII. (1961), p. 411.

5. AAS. LIV. (1962), p. 682. Ընդգծումը մեզմէ:

կ'արտայայտէր, քարոզուած՝ քրիստոնէական ամբողջ աւանդութենէն⁶:

Հասած էր ժամը որ Տիեզ. Ժողովին ուսուցումը՝ ինչքերու մասին՝ սկսէր անոնց «Հասարակաց» սահմանումէն⁷: Ասիկա պէտք է յարգուի միշտ, ինչ որ ալ ըլլան սեփականութեան այլեւայլ ձեւերը՝ Ժողովուրդներու օրինաւոր բարքերուն համաձայն (Հմմտ. Հմ. 69): Ուստի, հոս ալ լուրջ պատասխանատուութիւն մը կը կանգնի պետութիւններուն առջեւ՝ ձեռք առնելու ամէն օրինաւոր միջոց, անհետացնելու համար թշուառութիւնը, աւելի ողջամիտ ընթացք մը տալու՝ ինչքերու բաշխումին, եւ զարգացնելու ընկերային ապահովութեան միջոցները, որոնք մեծապէս կրնան սատարել զործնական արդիւնքներու հասցընելու ինչքերու հասարակաց յատկացումը:

Է) Այս հեռանկարին մէջ՝ անհատական ստացուածքի իրաւունքն ալ նոր իմաստ մը կը ստանայ: Բացի անհատին կամ իւրաքանչիւր ընտանիքի նկատմամբ կատարած դերէն, ընկերային դեր մըն ալ կը ստանձնէ. եւ այս՝ երկու տեսակէտներէ:

1° Այնու որ իւրաքանչիւր մարդու օրինաւորապէս ստացած բարիքները սահմանուած չեն միայն իր անձին եւ ընտանիքին,

նիքին, այլ նաեւ պարտականութիւն կը դնեն անոր վրայ՝ իր կարելիութեան եւ ուրիշին կարիքներուն չափով՝ օգնելու իր մերձակորին: Եղբայրսիրութիւնն ու ողորմածութիւնը, որոշ սահմաններու մէջ, նաեւ արդարութեան պարտականութիւն մը կը դառնան. արդարութիւն՝ որուն ախօր կը տրուի յաճախ «ընկերային արդարութիւն» կամ պարզապէս «équité» յորջորջումը:

2° Ընկերութեան մը մէջ, ուր ինչքերու բաշխումը կը հասնի ողջամիտ հաւասարութիւն մը ձեւացնելու, անհատական ստացուածքը՝ ինչքերու հասարակաց յատկացումին իրականացման ամէնէն զործնական արտայայտութիւններէն մէկը կ'ըլլայ:

Ժողովի անտեսա-ընկերային ուսուցումը՝ որ կը շօշափէ տակաւին ուրիշ զանազան հարցեր, կը փակուի Քրիստոսի անունով. «Ու՛ր հաւատարմօրէն կը հետեւի Քրիստոսի, ամէն բանէ առաջ՝ Աստուծոյ Թագաւորութիւնը կը փնտռէ. ասիկա աւելի հզօր եւ աւելի մաքուր սէր մը կ'արծարծէ անոր մէջ՝ օգնելու համար իր եղբայրներուն, եւ կատարելու արդարութեան պարտականութիւնները՝ սերէն ներշնչուած» (Հմ. 72):

(Շար. 5)

Հ. ԼԵՒՈՆ ԶԵՔԻՆԱՆ

ԶՈՅԳ ՎԱՍՏԱԿԱԻՈՐՆԵՐՈՒ

ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հայադիտութիւնը եւ հայ բանասիրութիւնը երկու մեծ կորուստներ արձանագրեցին 1968ի առաջին ամիսներուն, Վիեննական Միութեան Միաբանութեան զոյգ վաստակաւորներու մահով:

Հ. Վահան Վրդ. Ինգլիզեան († Յունուար 20) և Հ. Համազասպ Վրդ. Ոսկեան († Փետր. 25) մարեցան արդարներու խաղաղ նինջով, բանասիրական խոշոր վաստակով բեռնարար զանձարան մը թողլով մեզի՝ իրր ժառանգութիւն, իրենց բազմամեայ զոհողութիւններու, անբասիր ու ճգնասուն վանականի եւ ժրջանի գիտնականի քրտինքով օծուն:

Աշխատանքի մէջ եղբայր, աղօթքի եղբայր, մահով ալ եղբայրացան անոնք, իրր հարազատ ամուսինը արդարներու թէեւ զործունէութեան տարբեր գաղտերու մէջ փորեցին այլազան ախօսներ, առաջինը՝ հայ արժէքները Եւրոպայի հիւսիսային Ժողովուրդներուն մէջ առաւելապէս ծանօթացնելու նպատակով, երկրորդը՝ նուիրուած բուն հայ բանասիրութեան անդրադոյն նուաճումներուն, սակայն եկան միասնաբար ամբողջացնելու նուիրական եւ օգտաշատ ծրագիր մը:

Հանդուցեալ զոյգ վաստակաւորները՝ կարծէք՝ համադրական խորհրդանիշն եղան արտասահմանի մէջ բոյն դրած հայադիտական կաճառի մը երկճիւղ նկարագրին, որ Միութեան Միաբանութեան հինաւորեց ոգին է, Աւգերեաններու եւ Տաչեաններու, Ալիշաններու եւ Ակինեաններու ջանքերով նուիրականացած:

Հ. Վահան Վրդ. Ինգլիզեան՝ առաւելապէս «Ինգլիզ»ին ու «ալաման»ին արտերուն մէջ է նետած սերմերն հայկական մշակոյթին, Եւրոպայի ցոյց տալու համար հայ պատմութեան, հայ գրականութեան ու արուեստին զօրութիւնը կենսաւէտ: Հ. Համազասպ Վրդ. Ոսկեան՝ հայրենի ոսկեղէն դաշտերէն քաղած է պետութիւններ արեւահամ, հայ բանասիրութեան բաղինին ձօնելու համար մեր բերքը յուսով, հինաւորեց մեր փառքերուն եւ բարքերուն, վանքերուն եւ մաքաղաներուն յաղթապանձ ոգեկոչումով:

Հայ մշակոյթի պահակներն էին անոնք՝ Եւրոպայի սրտին վրայ, հայ սրբազան զանձերու երգուեալ մշակներն էին անոնք՝ օտար կայսրութեան մը կուրծքին թառած, որոնք հակառակ իրենց մարմնական տկար ու հիւանդոտ կազմին, իրր «եղբայր յեղբոր օգնեալ»՝ անառիկ բերդ մը կառուցին, հայ «սրբութիւններու սրբոց»ը:

Գաղափարի եղբայրներ էին անոնք, Միութեան զաղափարականի կրակով խանդավառօրէն սիրարծարծ, որոնք հիւսնաբանական հիմունքներու հիմամբ հարձականքներ:

Անոնց լուսաշող օրինակը, անտարակոյս, պիտի հրահրէ նորանոր սերունդներ՝ շարունակելու համար ոգեւին անոնց կտակած աշխատանքը, խորացնելու համար ախօսները սրբաբոյր:

Յիշատակի այս հակիրճ ոգեկոչումը, իրր եղբայրական սիրաջերմ ծաղկեփունջ, թող դառնայ աղօթք ու մաղթանք

6. Տիեզ. Ժողովը կը յիշէ Ս. Բարսեղ, Լակտանտիոս, Ս. Օգոստինոս, Մեծն Գրեգոր, Ս. Բոնաւենտուրա, Մեծն Ալբերտ. (Հմմտ. «Եկեղեցի» 10):

7. Բարոյական այս սկզբունքը իր ամէնէն աւելի փնտրական բանաձեւումին կը հասնի «Populorum progressio» կոնգրակին մէջ, ուր, ի միջի այլոց, կը հաստատուի. «Ամէն ուրիշ իրաւունք, ինչ տեսակի ալ ըլլայ, նաեւ սեփականութեան եւ արտ վաճառականութեան, են-

թարկուած են ասոր (այսինքն՝ այն իրաւունքին, զոր ամէն մարդ ունի՝ վայելելու երկրի բարիքներէն): Անհատական սեփականութիւնը ոչ մէկուն համար անպայմանաւոր եւ բացարձակ իրաւունք մըն է: Ոչ ոք իրաւունք ունի տարաբնորոշ իր զործածութեան վերապահելու՝ ինչ որ կարօտութիւններու սահմանէն դուրս է, երբ անգին ուրիշներ կարօտ են անհրաժեշտին» (Pop. progr. Թ. 23-25, ընդգրկուածները մեղմէ):